

6984

ԳԻՒՏ ԱՐԵՂԱՅ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

(Տ. ՄԿՐՏՉԵԱՆ)

ԻԲՐԵՒ ԶՈԳԵՒՈՐԱԿԱՆ



Ս. ԷԶՄԻԱՆԻՆ

Եկեղեցւոր Տպարան Մայր Աթոռոյ

1917

281
Գ 69

482
280
757-9h

281
4-69
ur

ԳԻՒՏ ԱՐԵՂԱՅ

"Աշխատ" - Ի Խորհրդային
Երկրներում
92 [Կարգադրություն]

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

(Տ. ՄԿՐՏՉԵԱՆ)

ԻՐԻՏԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ



Ս. ԷԶՄԻԱՆԻՆ
Էլեկտրագրի Տպարանի Մայր Արձույ
1917

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ. (Տ. ՄԿՐՏՁԵԱՆ)

ԻԲՐԵԻ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆ.

Ոչ մի չափի, ոչ մի արժեքի տակ չմտնող, անվերջ
կորուստների դարում դժուար է մատնանշել այս ու այն
կորուստի առաւել կամ պակաս զգալի լինելը: Զքաւոր
ժողովրդի համար իւրաքանչիւր կորուստն է զգալի, ամեն
մի անյետացած ոյժն անփոխարինելի:

Հսկայական աշխատանքի առաջ կանգնած հայ ժո-
ղովրդի համար մէն մի աշխատաւոր ձեռքը թանգ է և
հիվ է այն անանկամիտը, որ այժմ առանց փաղաքշելու
կմտենայ մեր նահատակների շիրիմներից ամէն մէկին:
Վերածնութեան — վերաշինութեան, անակնկալներով լի
եռուն աշխատանքի ժամին մոխրապատ հայրենիքի փլա-
տակներից բեկորներն ենք հանում ու հաշոււմ. հարիւր-
հազարների հաշուից այժմ տասնեակներն են մնացել մի-
այն. բնական է, որ աշխատաւոր ձեռքի կորուստը այժմ
քան երբէք զգալի է:

Կորուստն աւելի զգալի է դառնում, երբ գիտես, որ
հողի տակ ծածկուած ձեռքը ոյժ ունէր աւերակը շէ-
նացնելու, հմուտ էր քանդուածը նորոգելու, վարժ էր
վերաշինելիք տանը իւր հարազատ կերպարանքը տալու:
Այդպիսի աշխատաւոր ձեռք էր Կարապետ եպիսկոպոսը,
որի կորուստը օրէցօր զգալի է դառնում, երբ շուրջի,
ազգային աննախընթաց մեծ աղէտի առաջն առնելու հա-
մար շարժուող լեզուներ, անշարժ սրտեր եւ տեսնում,
մտքով հարուստ, խղճով աղքատների եւ հանդիպում:
Ճարտարապետներով հարուստ, աշխատաւորներով աղքատ
մեր ազգային տան անլուր աղէտի սահմակեցուցիչ ժամին
Կարապետ եպ.՝ի անունը ինքնաբերաբար է յիշոււմ:



956
37

Եզակի ուշադրութեան է արժանի Կարապետ եպիսկոպոսի յիշատակը այն տեսակէտից եւ, որ նա մեր ազգային եկեղեցու ուխտեալ հաւատարիմ պաշտօնեան էր, իսկ մեր եկեղեցու ներկայ դրութիւնը շատ է ցաւոտ, որ կարելի լինի անուշադիր թողնել նրա լաւագոյն զաւակներէց մէկի կորուստը:

Գրեթէ պատշաճ չափի ուշադրութեան արժանաց նրա յիշատակը, որքան այդ հնարաւոր էր հարիւր հազարներով գաղթականներ դէս ու դէն շարտող մեր ժամանակում, օրական հարիւրներով յիսկներ թաղող գերեզմանափորութեան սե ժամին: Սակայն որքան և նրա ընկերները, աշակերտները և յարգողներ աշխատեցին պարզաբանել նրա արժէքը և յիշատակը յաւերժացնելու համար միջոցներ ընծեռեցին, համաձայն ընդունուած կարգի, այնուամենայնիւ, իմ կարծիքով, հանգուցեալի գլխաւոր աշխատանքը նրան ոգևորող էական ձգտումը լրիւ, ցայտուն չբնորոշեցին:

Կարապետ եպիսկոպոսը առաւելապէս իբրեւ գիտնական, բանասէր, հասարակական-ազգային գործիչ նկարագրուեց ու գնահատուեց, բայց նրա հոգևորական լինելը նրա թափով աշխատանքը՝ հայ եկեղեցու վերանորոգութեան, հոգևոր կեանքի վերածնութեանն ուղղուած, լուրջ ուշադրութեան չարժանուեց. առանց այս հանգամանքի պարզաբանութեան Կարապետ եպիսկոպոսի արժէքը պակաս, նսեմ կերևար:

Եւ իմ նպատակը հէնց այն է, որ ցոյց տամ, թէ իրօք Կարապետ եպիսկոպոսի 22 տարուայ աշխատանքի հիմնաքարը կրօնական բարոյական վերածնութիւնն է եղել, որ նա ամենից առաջ և ամենից շատ հայ եկեղեցու հարազատ պաշտօնեան է եղել ու իր լաւագոյն ոյժերը, լաւագոյն աշխատանքը այդ ուղղութեամբ է գործադրել: Թէ իբրեւ ուսուցիչ, թէ իբրեւ տեսուչ ձեմարանի, թէ իբրեւ բեղմնաւոր աշխատակից և խմբագիր «Արարատ»ի, թէ իբրեւ թեմակալ, թէ նոյնիսկ իբրեւ գիտնական-բանասէր գրող նա ամենից առաջ գործել է իբրեւ հայ եկեղեցու

վերանորոգութեան, յառաջադիմութեան երդուեալ աշխատաւոր. նրա մէջ ամենից առաջ խօսել է Աւետարանի բարոյական սկզբունքը, նրան թե է տուել, ոգևորել «Լուսաւորչի Աստուածը» որին նա այնքան սիրում էր, որին նա այնպէս հաւատարիմ ծառայեց:

Հայ եկեղրցու կատարած ու կատարելիք դերը քաջ գիտենալով Կարապետ եպիսկոպոսը աշխատում էր գրչով խօսքով, գործով ԺԹ. դարում յատկապէս ռուսահայերի մէջ մի շարք արտաքին ու ներքին պատճառների շնորհիւ իւր բարձր նշանակութիւնը կորցրած եկեղեցու պատիւ, բարձրացնել, հոգևորականութեան ցաւոտ վիճակին դարման անել. նա համոզուած էր, որ հայ ազգային եկեղեցին ունի իւր կարևոր դերը հայ ժողովրդի զարգացման գործում և այդ խորը համոզմունքին հաւատարիմ մնայ մինչև իր անժամանակ մահը:

Նրա աշխարհայեացքը հասկանալու համար պէտք է 1894—1901 թւի «Արարատ» ամսագրի համարները թերթել, ուր նա զետեղել է մի շարք յօդուածներ: Գործնականի և տեսականի մէջ Կարապետ եպիսկոպոսը այն մեծ հակասութիւնից հեռու էր, որով բռնուած են մեր ժամանակի հասարակական գործիչներից շատերը. ուստի և այդ յօդուածները նրա գործնական աշխատանքը լուսաբանող մեկնութիւններ պիտի համարել. այդ յօդուածներում նա պարզել է իր ծրագիրը և աշխատել է գործնականում պայմանների ներածին չափ իրականացնել: Հէնց այդ յօդուածներից էլ հանել եմ նրա աշխարհայեացքը: Յօդուածների ցանկը*) ցոյց է տալիս, թէ Մայր Աթոռում նստած և ձեմարանի ուսուցչի և տեսչի օգնականի, յետոյ նաև տեսչի և տպարանի վարչութեան անդամի և խմբագրի կամ խմբագրութեան անդամի, երբեմն նաև վանական կառավարութեան անդամի մի շարք պատասխանատու պաշտօններով ծանրաբեռնուած Կարապետ վարդապետը (յետոյ եպիսկոպոս) ի՞նչ մեծ եռանդ ունէր

*) Տես վերջը:

աշխատանքի, ինչ թափով էր գործի կպել և ինչքան էր աշխատում: Յիրաւի, ով տեսել է նրան այդ տարիներում, կլիշէ, որ օր ու գիշեր անդադար աշխատում էր և այդ անսպառ աղբիւրը միշտ նոր ու նոր ծրագրներ էր յղանում, միշտ հայ եկեղեցու ու ժողովրդի վերածնութեան մեծ գործին ուղղուած:

Այնուհետեւ էլ Կարապետ վարդապետը հանգիստ չի մնում. աւելի շատ գործնական աշխատանքներ է կատարում, որոնք լրացուում էին նրա «Արարատ»-ում արծարծած մտքերի*):

I.

Անցեալ դարու 90-ական թուականները համայն Ռուսաստանի և յատկապէս Կովկասի սև ժամանակաշրջանն էր. հասարակական ինքնագործունէութեան միջոցները խլւում էին. վարչական—ոստիկանական հսկողութիւնն էր խստանում: Պետական ամբողջութեան տեսակէտից մամուլը և հասարակական հիմնարկութիւնները վտանգաւոր ոյժեր նկատուելով հազիւ տանելի էին համարւում, այն էլ ուժեղացրած գրաքննութեան հսկողութեան տակ առնելուց յետոյ:

Կովկասն առանձնապէս ժամանակի կառավարիչ Իշխան Գալիցինի աչքում ընդհանուր մարմինն անհարազատ անդամ էր երևում, որն ամեն ըտպէ իբր թէ ձգտում էր ընդհանուրից անջատուելու և ինչ որ անկախութիւն ստեղծելու:

Հայ ժողովուրդը աւելի քան երբ և է բարձր Վարչութեան աչքում անհաւատարիմ էին ներկայացրել, վտանգաւոր քաղաքացի և Կովկասի ու Ռուսաստանի մայրաքաղաքների նրա «բարեկամ» խմբագիրները մինչև Ռուստով

*) Յօդուածների ցանկում, դրել եմ և այնպիսիները առաջնորդողներից, որոնք ստորագրութիւն չունին, բայց որոնց ոգին ու ոճը ցոյց են տալիս պարզապէս, որ դրանք էլ նրա գրչից են ելած. այդ նոյնը հաստատում են ժամանակի խմբագրութեան միևս անդամները:

հասնող սահմաններով Մեծ Հայաստանի անկախ պետութեան առասպելներն էին հիւսում ու վերագրում տաճկի ճիրաններում գալարուող հային. վարձու գրողները իրենց երևակայութեան ճոխ պատկերների համար լի ու լի վարձատրուում էին, ինչ փոյթ որ այդ ոսկիները հայի արիւն արցունքով էին զնւում:

Ռուսահայի եղբայրական բարոյական պարտականութեան գիտակցութիւնից առաջացած ձգտումը՝ բարեխաւելու իր եղբայրակից արնաքամ հայի վիճակը ուս պետութեան դէմ յանցանք էր նկատուել և այժմ գովասանքի արժանացած, այն ժամանակուայ այդ յանցանքի համար հայը խստագոյնս տուժեց. փակուեցին մեր ծխական դպրոցները, հասարակական հիմնարկութիւնները. պատժի գլուխ գործոցն եղան եկեղեցական կալուածների գրաւումը 1903 թուին:

Կովկասահայի հասարակական զարգացման գործը զրեթէ կանգ էր առել. միակ հիմնարկութիւնը, ուր հայ մարդը կարող էր իր ազգային պարտականութիւնը կատարել, իր միտքը պարզել, իր ըզձերն արտայայտել եկեղեցին էր: Ազգային եկեղեցու ժողովրդական ոգին հնաբաւորութիւն էր տալիս եկեղեցուն կից հասարակական հիմնարկութիւնների, յատկապէս թեմական դպրոցների հարցով զբաղուելու: Անշուշտ նա ունէր իւր ազգային մեծ դատի հարցն ևս, որով զբաղուում էր առաւելապէս արտասահմանում. իմ խօսքը կովկասահայի տեղական խնդիրներով զբաղուելուն է վերաբերում միայն:

Բնականաբար հայ եկեղեցին իւր հոգեւորականութիւնով, իրեն կից եղող դպրոցական հիմնարկութիւններով կովկասահայի ուշադրութեան միակ առարկան դարձաւ: Թէ մամուլի, թէ դպրոցական աշխարհի աշխատաւորները մի իւրատեսակ հետաքրքրութիւն ցոյց տուին դէպի եկեղեցին ու սկսեցին զբաղուել ամիսներ, տարիներ շարունակ մեր ազգային այդ մեծ, բազմակողմանի գործունէութեան ասպարէզ եղող հիմնարկութիւնով: Առաջ եկան իրարից որոշ կերպով տարբերուող ուղղութիւններ, սկսուեց

հակամարտը, մտքի պայքարը, համեմուած իրական կեանքում մտքի արտահայտութեան գործնական դէպքերով:

Քիչ թէ շատ հասարակականօրէն ապրելու վարժուած, ազգային յառաջադիմութեան կարեւորութիւնն ըմբռնած կովկասահայր 90-ական սե տարիներում այնուամենայնիւ զաքարէական պապանձման չենթարկուեց ու իր ոյժերը ծախսեց, որքան օգտուէտ, որքան տեղին այդ թողնենք: Այժմ էլ այդ թուականների գործիչները լաւ յիշում են «Մշակական» «Նոր-Պարական» պայքարը, քահանայական հարցը, որին «հին ցաւ» անունն էին տուել և այն մոլեռանդութեան հասցրած վիճաբանութիւնները, որով բռնուած էին գրեթէ անխտիր բոլոր գործիչները և մամուլում և դպրոցներում:

Այդ պայքարը հասկանալու համար ուշադրութեան պիտի առնել պայքարող կողմերի ինչ լինելը:

Գիտենք, որ կովկասահայ մտաւորականներից առաջաւորները իրենց ժողովրդի յառաջադիմութեան գործին նպաստելու համար մտաւոր պաշարը առաւելապէս օտար երկրներում էին ձեռք բերել. դեռ 40-ական թուականներից սկսած Ռուսաստանն ու արեւմտեան Եւրոպան երիտասարդ հայերի հոգու աչքերը բաց էին անում, միտքը պայծառացնում. այսպէս նախապատրաստուածները վերագառնում էին մութ, տգէտ, յետամնաց հային կրթելու, եւրոպական լուսաւորութեան հաղորդակից անելու:

Ինչպէս Ռուսաստանում, այնպէս և մեզանում դեկաւորները երկու տարբեր ճանապարհներով էին մօտենում խաւար հայի լուսաւորութեան գործին. մի խումբն աշխատում էր առաւելապէս հային եւրոպականին յարմարացնել, միւսը՝ եւրոպականը հային յարմարացնել. մէկն աշխատում էր իր տեսած ու լսած լաւ կարգերը եւրոպայից փոխադրել հայ միջավայրը, առանց միշտ էլ քննելու, թէ որքան միջավայրը ոյժ, պատրաստութիւն ունի ընդունելու այդ, միւսն աշխատում էր ընտրութեամբ միայն նորը մտցնել մեր իրականութեան մէջ հաշուի առնելով տեղական ուրոյն պայմանները: Առաջ էին եկել

միտեսակ ուսական կեանքում գոյութիւն ունեցող արեւմտականների և սլաւօնօսէրների ուղղութիւններ (западники и славянофилы) ի հարկէ տեղական երանգաւորումներով:

Ժողովրդից կարուած լինելը, նրա կեանքով անմիջապէս ապրած չլինելը, նրա հոգու կազմին անծանօթ մնալը առաջ էր բերում լաւ ձգտումներով տոգորուածների աշխատանքների ապարդիւնութիւն, միակողմանիութիւն: Եւ ինչպէս որ ուսական կեանքում այս պակասը զգացին ու «въ народъ» հոսանքին ծայր տուին, այնպէս էլ մեզանում մի ժամանակ (70—80-ական թուերին) սկսեցին ժողովրդի մէջ մտնել, ուսումնասիրել այն նիւթը, որից ուզում էին յառաջադէմ Եւրոպացի կերտել: Թէ ինչ տոգորումներ ունէին այդ երիտասարդները, ինչով էին ոգևորուում և ինչ էին անում, ինչ պակասութիւններ ունէին, ինչ հետեանքի էին հասնում գեղեցիկ կերպով նկարագրել է Մուրացանը իւր «Առաքեալը, Նոյի Ազգաւր և Խորհրդաւոր Միանձնուհին» վէպերում:

Կարող էր արդեօք շուրջ 400 տարի օսմանեան ու պարսկական բռնապետութեան տակ տքացող հայը, որ հազիւ 60—70 տարի էր ինչ ազատուել էր, մի քիչ շունչ քաշել այդ «լաւ գաղափարները» իւրացնել մարսել, այս հարցը լուրջ քննութեան չառնուեց: Մի խումբը, որ «ազատամիտ»*) ածականով էր յայտնի, աշխատում էր մեր երկիրն էլ բարեկարգել որի գլխաւոր միջոցը, որը և մնաց մինչև այժմ գրեթէ միակը, եղած կարգերը խիստ քննադատելն էր, ցոյց տալը, որ դրանք փթած, հին են, որ պէտք է այդ ամենը քանդել, փշրել և ապա նորն սկսել. իսկ թէ այդ նորը որքան տեղին էր ու մատչելի այն ժողովրդին, որին հրամցնում էին, այդ շատ էլ վերլուծութեան չէին ենթարկում. ընդունելով, որ լաւն ամեն տեղ ու ամեն ժամանակ է լաւ: Այս խմբին հակառակ գործողները, որին «պահպանողական» ածականն էին տուել

*) Ազատամիտ ու պահպանողական գաղափարները գործեմ ածում այն մտքով, ինչ մտքով մեր մամուլում էն հասկանում, մի բան, որ էսպէս սխալ էր կիրաւուում:

հահառակորդները, լաւի գաղափարը յարաբերական էին համարում և օտարի, զարգացած հասարակութեան համար լաւը դեռ յետամնաց հայի համար միշտ էլ լաւ չէին համարում: Սրանք հաշուի էին առնում մեր կեանքի իւրա-յատուկ կողմերը, ուստի և հակառակորդների առաջարկած ոչ բոլոր դեղահատները հիւանդ մարմնի առողջանալուն նպաստող էին համարում:

Հայը գեռ խաւարից նոր էր ելել. չափազանց լոյսը նրա աչքերին կփնսսէր. նրանք ամբողջի ձեռքը չէին ուզում «ազատութեան ջահը» տալ, երկիւղ կրելով, որ յաճախ ամբողջն իրեն ու շրջապատին է փնտրում, փոխանակ օգտուելու: Երկու ուղղութիւններում էլ կային ծայրահեղներ, որոնք ամեն ինչ էին ուզում կամ ոչինչ. որոնք ասում էին ամեն բան պիտի փոխել միւսներն էլ ամեն տեսակ փոփոխութեան դէմ էին:

Երկու ուղղութիւնների համար էլ վեճի գլխաւոր կեդրոնական առարկան եկեղեցին էր, հոգեւորականութեան հետ, սկսած Խ. Աբովեանից. մի կողմից նոր համալսարանաւարտ երիտասարդներն էին կանգնած, միւս կողմից հոգեւորականութիւնը, որին միացել էին աշխարհականներից մի քանիսը: Եկեղեցին էր հայ ժողովրդի կենդրոնական մեծ հիմնարկութիւնը, որի հետ կապուած էին դպրոցները, որն ունէր կալուածներ, որի ձեռքին իրաւական ոյժ կար, վերջապէս որին ժողովուրդը դարեր շարունակ դիմել էր, պաշտել, որից պաշտպանութիւն էր գտել, լոյս էր ստացել:

Մինչև 1900-ական թուականները մամուլի, հրապարակախօսութեան տաք պայքարի խնդիրների մէջ առաջնակարգ տեղ է բռնել եկեղեցու և հոգեւորականութեան հարցը և պէտք է ասել, որ ազատամիտ ուղղութիւնը միշտ էլ յաղթանակ է տարել. այն էլ չմոռանա՞նք ասել, որ նրանց յաղթանակի պտուղները գործնականում շատ են տարբերուել տեսականից և դէպքեր են եղել, որ իրենք այդ գաղափարների հեղիակները հիասթափուել են, որ այն չեն ստացել ինչի որ ձգտել են:

Յաղթանակը տանելու գլխաւոր պատճառները լրիւ քննելու հարցը մի կողմը թողնելով նկատիմ, որ ազատամիտների բանակը ուժեղ էր, մինչդեռ հոգեւորականութիւնը առաւելապէս տղէտ, անոտիապաշտ էր, կտրուած գիտութիւնից, ժամանակի պահանջին անհամապատասխանող: 70-ական թուականներին եկեղեցու մէջ են մտնում, աւելի շուտ կուսակրօն հոգեւորականութեան շարքը, պատրաստի մարդիկ. բայց սրանք թուով շատ քիչ էին և ամենից առաջ վտանգաւոր տարր էին նկատուում մնացած, թուով շատ անգամ աւելի, անոտիապաշտ, առ ոտս այս ու այն վարդապետի ուսեալ հոգեւորականութեան աչքում: Բնականաբար կրթուած հոգեւորականներն էլ պէտք է ստիպուած իրենց ոյժը լարէին եկեղեցու ամեն ինչը սրբութիւն համարուող, ծէսի գերի, սովորութեան ստրուկ հոգեւորականների դէմ:

Աշխարհականների մէջ միայն կային մարդիկ, որոնք հոգեւորականութեան դատը պաշտպանում էին. բայց սրանք էլ չլինելով հոգեւորական, ի մօտոյ ծանօթ չէին եկեղեցու ոգուն, պահանջներին, ներքին կեանքին, ուստի չէին կարողանում խնդրին լուրջ բնոյթ տալ. Յաճախ պայքարը ծաղրանկարի կերպարանք էր ստանում և այդ ի փնաս եկեղեցու, որն ոյժ չունէր ինքն իր դատը վարելու:

Սկզբում պայքարը աշխարհաբարի և գրաբարի շուրջն էր դառնում, ապա դպրոցներին անցաւ, վերջը միայն կրօնական-եկեղեցական բնոյթ ստացաւ: Երբ ազատամիտներն սկսեցին հետզհետէ աէր դառնալ այս ու այն գիրքին, խնդիրը հոսաւ բուն եկեղեցուն. առաջ կրօնական աշխարհայեացքն ըստ էութեան քննութեան չէին առնում, այժմ այդ աշխարհայեացքն էլ փնասակար ճանաչուեց: Խնդրի այս կերպարանք ստանալուն նպաստեց նաև այն հանգամանքը, որ ազատամիտների շարքում երևան եկան բնագիտական, պատմական և նիւթապաշտական աշխարհայեացքներին ծանօթ անհատներ: Մի քանի տարում գիտութիւն ձեռք բերելը և այդ պաշարի վրայ հիմնուած դարվինզմի, մարքսիզմի անունից ճառելը բնա-

կան է, որ թիւրիմացութիւնների տեղիք պիտի տար երկու ուղղութիւնների մէջ. երկու-կողմերն էլ լաւ իւրացրած չէին գիտական նորութիւնները. ուստի մի կողմը յանուն, Եւրոպայում դեռ վերամշակութիւնների, սրբազորութիւնների ենթարկուող գիտական գոտւ ճշմարտութիւնների կրօնը և նրա գոյութիւնը աւելորդ ու հին էր հրատարակում, միւս կողմը անաստուածութեան, հակակրօնականութեան սաղմեր էր գտնում այդ գիտութիւններում:

Պայքարն աւելի այլանդակ գոյն պիտի առնէր անշուշտ, եթէ պահպանողական բանակի մէջ երևան չգային աւելի պատրաստուած, այդ «անաստուածութիւն քարոզող» գիտութիւններին ծանօթ անձինք: Այդ մարդիկ հէնց եկեղեցու պաշտօնեաներն են, կուսակրօն հոգևորականներ, որոնք և եկեղեցու, հոգևորականութեան դատն իրենք անմիջապէս իրենց ձեռքն են առնում:

Գէորգ Գ.-ի հիմնած ճեմարանը հիմնադրի դրած գլխաւոր նպատակին ծառայել սկսեց Մակար կաթողիկոսի օրով, երբ յարանական բաժինն աւարտողներից ոմանք կուսակրօն հոգևորականութեան մէջ մտան և ուղարկուեցին համալսարանները սկզբում աստուածաբանութիւն սովորելու, ապա նաև այլ գիտութիւններ՝ պատմութիւն, իրաւաբանութիւն, գրականութիւն, լեզուագիտութիւն. և այլն: Այդ աստուածաբանները վերադառնում են Մայր Աթոռ և արդէն տարրիների անցեալ ունեցող պայքարի նոր շրջանն սկսում: Այդ աստուածաբանների գլուխ է կանգնած Կարապետ վ.-ը, որը զբոլով, խօսքով, գործով աշխատում է հին ցաւը քննութեան առնել նոր ճանապարհով, նոր միջոցներով. այս հանգամանքը պէտք է ուշադրութեան առնել լաւ հասկանալու համար նրա կատարած գործը: Հէնց այն հանգամանքը, որ նա մի մեծ հոսանքի գլուխ է կանգնում, նրան աւելի ողջմիտ, լուրջ քովանդակութիւն է տալիս, մի պատճառ է, որ կովկասահայ հասարակական մտքի զարգացումը ուսումնասիրողը յատուկ ուշադրութեան առնէ նրան: Իւր 22-ամեայ աշ-

խատանքի ընթացքում նա այդ պայքարից չէ հեռացել և տեսական ու գործնական աշխատանքներում հաւատարիմ է մնացել իւր աշխարհայեացքին, որին հետևողներ, որն ընդունողներ կային ու կան էլ այժմ:

Նա դեռ շատ անելիք ու ասելիք ունէր, բայց մահն նրան շուտ տարաւ և նրա տեղն այժմ մարդ չկայ. և այդ հոսանքը կարծես նոյնիսկ առժամայն կանգ է առել: Այս հանգամանքն էլ ցոյց է տալիս, որքան ուժեղ անհատ էր Կարապետ վ.-ը, որքան մեծ էր նրա դերը այդ հոսանքում:

II.

Հայ եկեղեցու ամենից վերաւոր կողմը ժ. Դարում եղել է քահանայական հարցը, որի մասին զրեւ են և հոգևորականները և աշխարհականները. զրեւ են այնքան, որ վերջը «Հին ցաւ» անունն է ստացել*): Քահանաների տգիտութիւնը, անպատրաստ լինելը, ժամանակի պահանջներին անհամապատասխան լինելը, (մի բան, որ մինչև այժմ էլ զրեթէ նոյնն է մնում) առատ նիւթ էր մատակարարում և խիստ քննադատութեան և ծաղրի, ծանակի մատալին այն էր որ քննադատները բարեացակամ չէին դէպի այդ խնդիրը և ուղղելուց աւելի, վարկաբեկման էին ուշք դարձնում:

Այդ ցաւը կրկին մեծ եռանդով արծարծում է և Կարապետ վ.-ի ժամանակ. մի կողմից կանգնած են Լ. Սարգսեան և Լէօ, միւս կողմից Կարապետ վ.**): Սա հարցին տալիս է շուրջ բնոյթ, յօդուածագիրը պահանջում է, ոչ միայն մատնանշել ցաւը, որն իրօք կայ, որի գոյութիւնը բոլորն են ընդունում, այլ նաև պարզել այն միջոցները, որոնցով կարելի է բուժել վէրքը: Բժշկի գործը չի սահմանափակւում վէրքը գտնելով. նրա պարտականութեան մէջ մտնում է նաև բժշկական միջոցներ

*) Յատկապէս ուշագրաւ են Արշէն Երէցի (Հայրիկ) Արեւիկ. Սեդրակեանի հայեացքները, Լէօի, Լ. Սարգսեանի («Հին ցաւը») և Սպ. Սպանդարեանի յօդուածներն այդ առթիւ:

**) «Արարատ» 1900 թ. № VII. «Հին ցաւը» 338—343 եր.

առաջարկելը, սպեղանիներ ցոյց տալը: Ազատամիտ հոսանքի քննադատութեան թերի կողմերից մէկն այն է եղել, որ նա առաւելապէս անխնայ քննադատել է ժողովրդի այս ու այն պակասը, ազգային-հասարակական թերութիւնը, առանց միշտ էլ բժշկութեան համապատասխան դործն սկսելու. ուստի ստեղծուել է մի աւելի դժբախտ դրութիւն. եղածը քանդուած է, նորն էլ չկայ: Կարապետ վ.-ը ամենից առաջ այդ վտանգաւոր կողմն է մատնանշում. ապա նկատում է, որ քննադատութիւնն էլ կատարւում է անվայել լեզուով, անտեղի, վարկաբեկիչ դարձուածքներով: Սրտացաւ քննադատութիւն չէ տեսնում նա քահանայական հարցով զրադուողների մէջ, այլ մի տեսակ թշնամական-արհամարհական: Քննադատների, հրապարակախօսների մէջ շատ շատերը կան, որոնք իրենց կոչմանն տնհամապատասխան են, որոնք չունին այն տուեալները, որոնց հիման վրայ իրենց խօսքը լսողի, կարգացողի համար կշիռ ստանայ: Այդպիսի քննադատներին նա համարում է մամուլի տակաւններ, որոնք խիղճ ու միտք վաճառել գիտեն, դաւանանքը շապկի նման փոխում են. ամենից ցաւալին այն է, որ այն լեզուն «որ կարկամում է և պապանձում գիւղի գզրի առաջ, շանթ ու որոտ է թափում եկեղեցու հովիւների գլխին»^{*}. Իսկ այս ընթացքը ստրուկին է միայն վայել: Ահա 20 տարի է այդպէս են վարւում քննադատները և աշխատում են եկեղեցու հեղինակութիւնը ձգել ժողովրդի առաջ: Համաձայնե՞ք, որ իրօք մեղանում, սկսած հայոց Հայրապետից մինչև վերջին տիրացուն ամենատեսակ անվայել լեզուով գրուած քննութեան են ենթարկւում և գրում են այդ այն մարդիկ, որոնք իրենց աչքով, օրը ցերեկով տեսնում են այլ զեղծումներ, պակասներ, բայց փայլուն կոճակից, կօկարդից երկիւղ կրելով լռութիւն են պահպանում: Հասարակական գործիչը պէտք է լինի ճշմարտախօս, անաչառ և իրօք ներքին, հոգու ազատութիւն վայելող:

Նրբ առաջը կանգնած է մի թոյլ, իրաւագուրդ անձն ու դու քո շանթերն են թափում, օգտուելով նրա անօգ-

նական դրութիւնից, իսկ հզօրի առաջ, որը աւելի թերութիւններ ունի, քան մտրակի տակ ընկած տգէտը, դու լռում ես, անգամ քծնում, դու մի բռնակալ ես, յոխորտացող և ոչ կատարեալ ազատութիւն վայելող^{*}): «Լեզուի և գրչի սանձարձակութիւնները մեր մէջ»^{**}) յօդուածում յայտնում է, որ մերոնք եկեղեցու, կրօնի մասին լպիրշ, ծաղրական ձևով են խօսում, իսկ մեր եկեղեցականները քաջութիւն չեն ունենում բողոքելու, պաշտպանւելու, իրենց հաւատամքը սուրբ պահելու:

Կարապետ վարդապետը ինքն էլ ընդունում է^{***}) որ հոգևորական գաղափարը մեր ժամանակում որոշ չէ և ամենատարօրինակ կարծիքների առարկայ է. գիտէ, որ հոգևորականների մէջ կան մարդիկ, որոնք ծաղրում են ու ծիծաղում ձեռնադրութեան ժամանակ իրենց գլխին կարգացող աղօթքների վրայ, որոնք ձևի համար են վերարկու հագնում: Բայց եթէ հասարակութիւնը, որ տեսնում է այդ, գիտէ և տանում է նման հոգևորականներին, իրաւունք չունի այլևս արժանաւոր հոգևորականների պահանջ անելու. ուստի առաժն ասում է՝ թէ ինչպիսի քահանան է, այնպիսի էլ ծուխն է: Նւ որքան է շատ այդպիսիների թիւը մեր եկեղեցու թէ աշխարհիկ, թէ կուսակրօն հոգևորականների մէջ, որոնք փող աշխատելու, պատիւ ձեռք բերելու համար են սև վերարկու հագել, որոնք քահանայական կոչումը չեն զգացել ու միայն իրենց տնտեսական ապահովութեան համար զանազան ձևի համախօսականներով, դրամով ձեռնադրւելու շնորհն են գտել:

Այս է պատճառը, որ ԺԹ. դարում լուսաւոր սերնդի համար արհամարհելի է դարձել «տէրտէր» բառը և ժողովուրդն իսկ ստեղծել է առած, թէ «մարդ որ չդառնայ, խօ տէրտէր կդառնայ». մի բնորոշ խօսք, որ տէրտէր դառնալու ուղու ամենագիւրդին լինելն է ցոյց տալիս:

^{*}) «Արարատ». 1895 թ. թիւ 6.

^{**}) » 1899 թ. թ. թ. 381—3 եր.

^{***}) » 1895 թ. թ. Գ. «Հոգևորական ասպարէզը»:

Հոգևոր իշխանութիւնն ինքը անտարբեր վերաբերմունք է ցոյց տուել զէպի իւր իսկ գոյութեան հարցը. անխտիր ամեն պատահածի իր մէջ է ընդունել. հոգևոր իշխանութիւնը անարժաններին արժանաւորներից գերադասել է, պարգևներ է տուել այս ու այս ու այն շողովորթին, սիմոնականութիւնը մեծ դեր է կատարել*): Ընականաբար ժողովուրդը հիասթափուել է, արժանաւորներն էլ հալածուած մնալով իրենց ոյժերը չեն կարողացել կանոնաւոր գործադրել. այդ տեսնելով զրաի կարող ոյժերն էլ հեռացել են և հոգևորական դառնալու ցանկութիւնը մեղցրել մէջերն:

Եկեղեցականն ինքը այնուհետև դարձել է սոսկ ծիսապաշտ, մի մեքենայ, որն իւր ուշքն ամենից առաջ ուղղել է ժամաւորի ձեռքին ու գրպանին և ոչ Աւետարանին, որի ուշ ու միտքը կենդրոնացած է եղել ծխականի քսակից աւելի ոսկի դուրս քաշելու վրայ և ոչ իւր առաջ կանգնած քրիստոնէի հոգին պայծառացնելու, սիրտըն ազնուացնելու միջոցների վրայ, որը հէնց իւր կոչումն է և անմիջական պարտականութիւնը:

Այս ցաւալի դրութեանը զուգընթացել է և մեր ժողովրդի բարոյական վիճակի անկումը**): Ժողովուրդն առաջներում ունէր բարոյական որոշ հասկացողութիւն. կային բաներ, որոնց համար ասում էր «մեղք է» այդ անելը. այժմ այդ չափն այլ ևս չկայ. այժմ «ի՛նչ մեղք ի՛նչ բան» են ասում: Փողն է նրա գոյութեան հիմքը և Բագուն մեր ժողովրդի բարոյական այլասերման, սնանկութեան շտեմարան-պատկերն է:

Մեր ազատամիտները թոյլ են տուել եկեղեցու ներքին կեանքի հետ ամեն կերպ վարուելու***). ամեն ոք ամեն տեղ իր նորամուծութիւնն է արել. չօծուած պատկերներ և այլ սպասներ, իկոններ մտցրել են եկեղեցին,

*) «Արարատ» 1899 թ. Բ.

**) » » թ. է. 338—340 եր.

***) » » 1899 թ. ԺԲ. 503—507 եր.



այս ու այն աղօթքը, ծէսը կրճատել կամ կերպարանափոխել են: Շրջենք հայ եկեղեցիները, և կտեսնենք որ ամեն տեղ, մանաւանդ գաղութներում աղաւաղումներ, նորամուծութիւններ են եղել, թէև կաթողիկոսը կարգադրել է հանել այդ ամենը և միօրինակութեան հետեւել, բայց շատ տեղեր չեն լսել: Այսօր այսինչն է ժողովրդի ներկայացուցիչը այս է անում, վաղը մի ուրիշն է իր նախորդի արածը քանդում է, իր կարծիքով լաւը մտցնում և եկեղեցում առաջ է գալիս քաօս վիճակ: «Մենք գիտենք, ասում է Կարապետ վ.-ը, որ եթէ թուելու լինինք մեր եկեղեցու գաւթում թէ հօտի և թէ նրա հոգևոր հովիւների կատարած զեղծումները, շունչ չէր հասնի հաշիւն ամփոփելու»:

Եկեղեցու այս դրութիւնն ահա հնարաւորութիւն է ստեղծել մեր ինտիլիգենտների համար աջ ու ձախ քննադատելու եկեղեցականներին, կրօնը, եկեղեցու վարչութեանը: Կարապետ վ.-ը ասում է**), որ «եկեղեցու և հոգևորականի մասին խօսելուց աւելի դիւրին՝ բան չկայ. ամեն ոք անպատիժ կերպով ասել կարող է այստեղ ինչ կուզէ» (199 եր.): «Մեր լուսաւորիչները պնդում են թէ Աստուած չկայ, մոմ վառելը, զանձանակ ձգելն աւելորդ է»**):

Հայ հոգևորականութեան մէջ շարունակ կղերական ոգի են տեսնում: «Ոչ մի տեղ ժողովուրդը, ամեն տեղ կղերը» ահա նրանց ծանր մեղադրանքը***). ուրիշ խօսքով, որ կղերականութիւնն է իշխում հայոց եկեղեցում, որ հոգևորականութիւնն աշխատում է իր ձեռքը ձգել ամեն բան, ինքն անել, ժողովրդին թոյլ չտալ: Մեղադրում են աստուածաբաններին ամեն բանում եղածի և չեղածի պատասխանատու են համարում: Բանն այնտեղ է հասել, որ ինքը հոգևորականը եկեղեցու բեմից ասել է «կղեր-

*) «Արարատ» 1898 թ. Ե.

**) » » 1899 թ. Ե.

***) » » 1895 թ. Ե.

ազգի աւեր»: Դժուար թէ սրանից էլ այն կողմը անցնել կարելի լինի, դժուար թէ հոգևորականութեան անկման լաւագոյն ապացոյցը բերելու հարկ լինի*):

Ահա այս ամենի դէմ է սկսում Կարապետ վ.-ը իւր պայքարը, մի պայքար, որը խիստ ծանր էր, բայց և անհրաժեշտ, մի պայքար, որի մէջ ինքը գրեթէ մենակ էր, իսկ իւր դէմ կանգնած հին ախոյեան հակառակորդներ և զէպի այս հարցը անտարբեր ժողովուրդ: Եւ իւր պայքարը նա սկսում է ամենից առաջ խօսքով. նա ընդունում է, որ հասարակական կեանքի մէջ ամեն մի նոր շարժում խօսքով է սկսւում: «Նախ քան կեանքի մէջ մի նոր փոփոխութիւն կընկնի, փոփոխութիւն է ընկնում մտքի մէջ»**) այդ իսկ պատճառով նա «Արարատ»-ում շարունակ կրօնական-բարոյական գաղափարներ է քարոզել, առաջնորդողներ է տուել, միաժամանակ օրուայ հրատապ հարցերն է արծարծել և հակառակորդների ասածներին է պատասխանել***): 1895 թ.-ի համար Ա.-ում ինքը յայտնում է, որ ամսագրի ընթացքը չափից աւելի ենթակայ է եղել բախտի բերման, ուստի և ցարդ չունի որոշ տիպար. իբրև կրօնական թերթ պէտք է բարոյագիտական խնդիրներին տեղ տայ. նա ուզում է, որ «Արարատ»-ը ամեն մի հայի համար անհրաժեշտ թերթ դառնայ†), որ բահանաները, եկեղեցականները թղթակցեն ծանօթացնեն գրութեան հետ. թող ժողովուրդն իմանայ լաւն ու վատը: Նա այն մարդկանցից չէ, որոնք վերքը ծածկում են, այլ նրանցից, որոնք վերքը բաց են անում ու համապատասխան սպեղանիներ առաջարկում:

*) «Արարատ» 1901 թ. Ե.—2.

**) » 1895 թ. է.

***) 1897—1899 թիւը «Արարատ»-ի խմբագիր է եղել. 1900 թ.-ին Գարեգին վ.-ի հիւանդութեան պատճառով մի քանի ամիս վարել է այդ պաշտօնը. 1901 թ.-ի մայիսից կրկին վարել է այդ պաշտօնը:

†) «Արարատ» 1896 թ. Ա.

Նա թերթին նեղ կրօնական ծրագիր չէ տալիս. տեղ է տալիս նաև մեր պատմութեան, գրականութեան, մանկավարժութեան վերաբերող հարցերի, զբաղւում է օտար եկեղեցիներին վերաբերեալ խնդիրներով: Իրօք նրա խմբագրութեան օրոք «Արարատ»-ը հարուստ է իր բովանդակութեամբ և նկատելի է, որ կրօնական-բարոյական հարցերը աւելի կենսական, աւելի լուրջ, ժամանակակից ոգով են լուսաբանուած: Համեմատենք «Արարատ»-ի նախկին տարիների հետ, երբ ամսագրում կրօնական-բարոյական գրողը միայն Արշակ Տէր Միքայէլեանն էր և կտեսնենք, որ վերջինիս յօդուածները չոր ու ցամաք դատողութիւններ են, դաւանաբանական հարցեր շօշափող, համեմուած գանազան սխօլաստիկ բացատրութիւններով: Գալիս է Կարապետ վ.-ը և սկսում է կրօնին, բարոյականութեանը նայել կեանքի տեսակէտից. նա կրօնը ժողովրդի յառաջագիմութեան անհրաժեշտ ոյժ է համարում և այդ ոյժը քննութեան, վերլուծութեան ենթակայ:

Յատկապէս այս հանգամանքը, Ս. Գիրքը, կրօնական ընդունումները քննութեան ենթակայ համարելը ուշագրաւ երևոյթ է և նա թէ իր գրուածներում, թէ դասախօսութիւններում այդ միտքը պաշտպանել է: Իբրև ազատամիտ աստուածաբանների աշակերտը, իբրև նուրբ և խորը ըմբռնողութեան տէր Կարապետ վ.-ը կրօնի էութիւնը բարոյական ոյժի մէջ էր տեսնում և դէմ էր այն եկեղեցականներին իսկ, որոնք Ս. Գրքի ամեն մի տեղեկութիւնը, անսխալական, անքնադատելի էին համարում. նա ասում է*), որ «յայտնի իրողութիւնների առաջ աչք փակելը կամ դասը պաշտպանելու համար հոգւոյ հեղինակութիւնը ձգելն ինչ օգուտ կբերէ քրիստոնէութեան»: Ս. Գիրքը ճշմարիտ յայտնութեան յիշատակարան է և ոչ հնախօսական բնագիտական տեղեկութիւնների ժողովա-

*) «Արարատ». 1898 թ. Ա. գրախօսական Ս. Բ. Սահակ. դասագրքերի:

ժող. ուստի և նրա կրօնական արժէքն ու նշանակութիւնը ամենեւին չեն ընկնի, եթէ այս կամ այն, կրօնի հետ կապ չունեցող տեղեկութեան սխալ կամ թերի լինելն երևաց: Կրօնական ոգին նրա մէջ խոր արմատ ունէր և նրա էութիւնը համակուած էր Փրկչի բարոյական սկզբունքների կատարեալ հաւատովը. նա ընդունում է, որ «կրօնական զգացումը, իբրև խորագոյնը և վսեմագոյնը բոլոր զգացումներից ոչ մի կեղծիք չի վերացնում»*) . նրա առաջնորդողները օրինակ հայկական կոտորածների ժամանակ 1895—6 թւերին**) շնչում են բուռն, ջերմ, խորը կրօնական ոգով. Փրկչի վարդապետութեան բարոյական սկզբունքներին ուխտուածի անխախտ հաւատով:

Նա համամիտ էր իր հակառակորդների հետ, որ եկեղեցին անթիւ թերութիւններ ունի, որ հոգևորականութեան վարկը ընկնում է ժողովրդի աչքում, բայց համամիտ չէր հակառակորդների առաջարկած միջոցներին՝ եղածը քանդելուն. նա բարեփոխութեան կողմնակից էր: Նա ասում էր, որ վերածնութիւնը, վերակենդանութիւնը կենդրոնից պիտի սկսուի. այդ կենդրոնը Մայր Աթոռն է: Նա տեսնում էր, որ դրսի հասարակութեան և Մայր Աթոռի մէջ սերտ կապ չկար, որ տիրում է սառնութիւն, որը արդիւնք է դրսում եղող քննադատողների Մայր Աթոռի իրադարձման, իրական դրութեան անծանօթութեան. դրա համար պահանջ էր դնում, որ դան Մայր Աթոռ, ծանօթանան դրութեան հետ, հետաքրքրուեն եղածով և ոչ թէ միայն հեռուից հեռու խօսեն***):

Հոգևորականներն իրենք պիտի մտածեն իրենց վարկը բարձրացնելու մասին և հայ համայնքն էլ պիտի միջոց տայ այդ բանին: Սակայն Կարապետ վ-ը ցաւօք սրտի տեսնում է, որ քիչ են այն հոգևորականները, որոնք պատ-

*) «Արարատ». 1895 թ. Ե.

**) 1895 թ. ԺԲ, 1896 թ. Գ, Է, Ը. 1897 թ. Ա. ԿԴ:

***) 1895 թ. Դ. և Զ.

բաստութեամբ, բարոյական վարկով, խելքով աչքի չեն ընկնում, բայց փառաբանում են, մեծարում գրսում, որովհետև այս ու այն կուսակցութեան պահանջներին համակերպում են*), մինչդեռ հոգևորականը չպէտք է այս ու այն անձնաւորութեան հաճոյանալու ախտով բռնւի, այլ միայն Փրկչին ծառայի:

Հոգևորականը պէտք է կենդանի խօսքով ու գործով օրինակ լինի ժողովրդին. նա ընդունում է որ քարոզը կարևոր է, բայց ամենից առաջ պէտք է «ժողովրդի հոգին ճանաչել, նրա ցաւերն ու հոգսերն իմանալ, նրա լեզուով, նրա սրտի լեզուով խօսել»**): Քարոզողը պէտք է ամենից առաջ հաւատ ունենայ, համեստ լինի, իր ասածի ճշմարտութեանը երդուեալ պաշտպան լինի***): Իբրև տիպար քարոզիչ նա ընդունում է Հայրիկին, որը ունէր նրա կարծիքով բնատուր ձիրք և որին իբրև հոգևորական լուսագոյն քարոզչի առաջարկում է, որ բոլոր հոգևորականները հետևեն†):

Հակառակորդները ընդհանրապէս պահանջ են դնում, որ հոգևորականները կրթուած լինին. կրթութիւն ասելով նրանք հասկանում են գործնական գիտելիքները՝ գիւղատնտեսութիւն, իրաւաբանութիւն, բժշկութիւն և պահանջում են, որ եկեղեցում այդ նիւթերի մասին էլ խօսեն: Հոգևորականի կրօնական-բարոյական կրթութեան մասին, որը նրա անմիջական կոչումն է, նրանք չեն էլ մտածում: Կարապետ վ-ը հակառակորդների այս վերջին հայեացքի դէմ է պայքար մղում: Նա ընդունում է, որ կրօնաւորը աշխարհից չպէտք է փախչի, ինչպէս այդ միջին դարերում կար, երբ աշխարհը պիղծ էր համարւում, մեղքի բուն ուստի և քաշւում էին անապատները: Կարապետ վ-ը պահանջում է աշխարհում մնալ, գործել աշխարհում և պայքարել մեղքի դէմ, կռիւ մղել աշխարհում եղած

*) «Արարատ» 1896 թ. ԺԲ.

**) 1898 թ. Գ. Դ.

***) 1895 թ. Բ.

†) 1900 թ. Դ.

անարդարութիւններէ դէմ: Նա ասում է*), որ հայ կրօնաւորը ոչ հնումը, ոչ էլ այժմ աշխարհից կտրուած չէ. ճշմարիտ է կան և իրենց կոչմանը անհամապատասխան կրօնաւորներ բայց ամբողջ դասակարգին մեղադրել չի կարելի. վանականը մեղանում միշտ էլ ժողովրդի աչքի առաջ է, նրա քննութեանը ենթակայ. և «մի կոպէկ տուողն էլ բերան է բանում կրօնաւորի դէմ»**): Եկեղեցականն ամենից առաջ ունի եկեղեցական պարտականութիւն. նա չպէտք է խորշէ, ծաղրով վերաբերուէ իւր կատարած ծէսին. դա էլ պարտք է, դա էլ աշխատանք է, և եթէ դրսում ծաղրով են վերաբերում, այդ նրա համար, որ քահանան ինքն է ծէսը փող աշխատելու միջոց դարձրել:

Խիստ է Կարապետ վ.-ը այս խնդրում ու պահանջ-կոտ դէպի հոգևորականը. «Եթէ առէք, կերէք-ի ժամանակ, ասում է նա, քահանայի մարմնով սարսուռ չի անցնում, նա զուր է քահանայ դարձել»***): Այս պահանջից չի հետևում, թէ հոգևորականը միայն և եթ ծէսով պիտի զբաղուի և միւս գործնական գիտելիքները զանց առնէ. բայց ամենից առաջ կոչումն զգալու անհրաժեշտութիւնն է շեշտում, ապա նաև ժողովրդի առօրեայ կարիքներին ընդառաջ գնալու հարցն է դնում:

Հակառակորդները Կարապետ վ.-ի այս պահանջի մէջ կղերականութեան ոգին են տեսնում և մեղադրում են նրան, թէ եկեղեցին կղերական հաստատութիւնն է դարձնում: Նա ուժգինս բողոքում է այդ անարդար մեղադրանքի դէմ. կղերական ոգին եղել է, ասում է նա, կաթոլիկ եկեղեցում. հայ եկեղեցին միշտ էլ ազատ է եղել այդ ոգուց. նա ընդունում է որ եկեղեցու պաշտօնեաները առանձնաշնորհումներ չպէտք է վայելեն աշխարհից, իբրև համայնքի անդամ†): Հայ եկեղեցու ոգու համար

*) » 1900 թ. է.
**) » 1897 թ. 2.
***) «Արարատ» 1898 թ. Ե.
†) » 1898 թ. Ը.

Կարապետ վ.-ը ունի գրած «Ազգային եկեղեցի» վերնագրով բրոշիւրը, որը և յանձնարարում ենք ընթերցողներին այս խնդրի լուծարանութեան համար:

Մեր կրթութենքը չեն ճանաչում մեր եկեղեցին, ասում է նա, մեր կրօնի մասին գաղափար անգամ չունին ու խօսում են. խօսում են այն բանի մասին, որից հասկացողութիւն չունին իսկ և այս հանգամանքը Կարապետ վ.-ին աւելի է բորբոքում*): Հակառակորդները պահանջել են կրօնաւորներից այնպիսի բաներ, որ նրանք անկարող են եղել կատարել և երբ այդ պահանջը չի կատարուել, հակառակորդները բացատրել են նրանով, որ իբր թէ կրօնաւորները այդ բանին դէմ են: Մինչդեռ փաստն այլ է, որ այդ պահանջներն անկարելի է եղել կատարել, որովհետև պատրաստի ոյժեր չեն եղել: Կարապետ վ.-ը ասում է, գիտէ՞ն ովքեր են եղել էջմիածնում 40—60-ական թուականներում. գիտէ՞ն ինչ պատրաստութեան տէր են եղել. ի հարկէ չգիտեն ու պահանջում են**):

Դարձեալ անտեղեկութեան հետևանք է և այն հանգամանքը, որ հակառակորդները պնդում են, թէ էջմիածինը լցուել է աստուածաբաններով, որ աստուածաբանները տխուր հոչակ ունին, պորտաբոյծ են, ձրիակեր, կղերական ուղղութեան հետևող: Այս բանի դէմ է բողոքում խստօրէն Կարապետ վ.-ը***). յայտնելով, որ հակառակորդները աստուածաբանական գիտութեան ծանօթ չեն, չգիտեն ի՞նչ է աստուածաբանութիւնը, չգիտեն իրօք քանի՞ աստուածաբաններ կան և ի՞նչ են անում, ի՞նչ ուժիկ ստանում: Այստեղ Կարապետ վ.-ի արդար գայրոյթն և տեղին և հասկանալի է. խօսում են մարդիկ, յանուն էվուլիւցիայի, կուլտուրիայի, դարվինիզմի, բայց որոնք միամիտ հասկացողութիւն ունին այդ մասին. սրանք են, որ օրինակ են բերում Ամերիկան, ուր եկեղեցին պետութիւնից

*) «Արարատ» 1892 Ե.
**) » 1899 թ. է.
***) » 1899 թ. Ժ և ԺԱ. 1901. Ե. և 2.

բաժանուած է, բայց մոռանում են և այն, որ եկեղեցին այնտեղ մեծ դեր է կատարում, որ Անգլիայում, որ Դարվին, Սպենսեր է տւել, եկեղեցին ամեն կիրակի աղօթողներով է լցւում և մարդիկ Դարվինի գերեզմանի մօտից անցնում են Ֆարրարին լսելու. անգլիացին գիտէ գնահատել ամեն մէկին իր տեղը: Իսկ մեզանում. Դարվինի անունը լսածը եկեղեցու մօտից անցնելն անգամ յետագէմ քայլ է համարում, որովհետեւ այդպիսին ոչ Դարվինին է հասկանում և ոչ եկեղեցու էութիւնը կարողանում է ըմբռնել:

Մեր քննադատները, ասում է Կարապետ վ-ը, կարծում են աստուածաբանութիւնը վերացական տեսութիւններով է զբաղւում. իսկ իրօք Ս. Գրքի պատմական-բանասիրական հետազոտութեամբ է զբաղւում. բողոքում են թէ էջմիածինը լցուեց աստուածաբաններով. մինչդեռ այն ժամանակ իրօք 2 աստուածաբան կար. (ապագայում էլ թիւը 5-ի հասաւ. այժմ էլ միայն 3 հոգի կան): Կարապետ վ-ն էլ պահանջում է կրթուած հոգևորականութիւն, բայց նախ և առաջ հոգևորականը պէտք է Աւետարանին լաւ ծանօթ լինի. պէտք է հասկանայ եկեղեցում իւր կարգացածը: Մի ասէք, թէ աստուածաբանութիւն պէտք չէ, ասում է նա, այլ ասէք ի՞նչ աստուածաբանութիւն է պէտք. այս է Կարապետ վ-ի պահանջը*): Հակառակորդները հոգևորականներին միայն հասարակական գործիչների դեր են տալիս, իսկ Կարապետ վ-ը ամենից առաջ նրան Աւետարանի աշակերտի պաշտօնն է յատկացնում և բնականաբար կրօնական-բարոյական կոչում ու պատրաստութիւն պահանջում, առանց ժխտելու, որ կողմնակի գիտելիքներն ևս հոգևորականներին պէտքական են:

Նրանք, որոնք կրթուած քահանաներից ամենից առաջ գործնական գիտելիքներ էին պահանջում, գիւղացուն օգնութեան հասնելու, նրանց պահանջը մասամբ իրակա-

*) «Արարատ» 1898 թ. Ե.

նացած է շնորհիւ գիւղատնտեսական ընկերութեան և իւր ճիւղերի, փորձադաշտերի, հիւանդանոցների, ֆելդշերների, բժիշկների. իսկ ուր մնաց քահանայի կրօնա-բարոյական պատրաստութիւնը, որի կարիքը նոյն գիւղացին ունի, բայց քահանաները չունին: Կարապետ վ-ը սխալ հասկացողութիւն է համարում այն պահանջը, որ դնում են, «սքեմն ու կատարուած պաշտամունքը իբրեւ պատրուակ ընդունել, հողն ու այգին մշակելու, խաղողից գինի պատրաստելու միջոցները» ժողովրդին սովորեցնելու, ինչպէս այդ առաջարկում են «Մշակ» «Մուրճ» թերթերը*): Հոգով տիրացու հայ ժողովուրդը ամենից քիչ իւր հոգևոր պէտքերովն ու պարտականութիւններովն է հետաքրքրուել, ասում է Կարապետ վ-ը, այս պակասը ծանրանում է հոգևորականների վրայ և սրանք ամենից առաջ պէտք է Աւետարանը լաւ գիտենան, որ իրենց պարտքը կատարել կարողանան:

Հակառակորդները յայտարարում են, որ աստուածաբանները ձրիակեր, պորտաբոյծ, հացկատակ են, մինչդեռ նրանք բարձրագոյն կրթարաններում են սովորել, հրաժարուել են իրենց անձնական ազատութիւնից և 600—700 ռուբլով ծառայել են ձեմարանում. երբ իրենց աշխարհական ընկերները նոյնքան գործ կատարելով ստացել են 1500—2000 ռ: Թող զնան հետաքրքրուեն, քննեն տպարանը, ձեմարանը, Դիւանը, Սինօդը և այլ հաստատութիւնները և կտեսնեն, որ այն աստուածաբանները, որոնք պորտաբոյծ տղեղ ամականին են արժանացել, այնքան աշխատանք են կատարել, որ մի աշխարհական տարեկան 3—4000 ռուբլով հազիւ համաձայն էր կատարել: Այդ անարդար մեղադրանքը պատճառ է եղել, որ Կարապետ վ-ը արդար զայրոյթով լցուի աստուածաբան վարդապետների վրայ յարձակուողների դէմ և փաստերով, ոչ լոկ խօսքերով ցոյց տայ, թէ էջմիածնի աստուա-

*) «Արարատ» 1901 թ. է և Ը.

ծառանները գործ են կատարում և զբոսում ոչ միայն չեն գնահատում, այլ և պախարակում են:

Կրօնական վերածնութեան խնդրում լաւագոյն միջոցը ըստ Կարապետ վ-ի դպրոցն է: Մեր ազատամիտները կրօնը համարում էին փթած, հին բան, կրօնի տակ նրանք հասկանում էին առաւելապէս սնոտիապաշտութիւնը, եկեղեցու ծիսակատարութիւնը, մինչդեռ կրօնը ծէս լինելուց շատ է հեռու և երկուսի մէջ եղած կապը հետեանք է պատմական պայմանների: Կարապետ վ-ը պահանջ էր դնում, որ դպրոցներում կիրակի օրերը կրօնականոյցները երեխաներին ժողովեն, հոգևոր երգեր երգել տան, Աւետարանից կտորներ կարդան և բացազդութիւններ տան և այդ նոյնը անեն նաև մեծերի համար:

Այս առաջարկն ըստ իս և անիրագործելի էր և անօգուտ, քանի որ բուն կրօնական ոգին մարդուն հասուն ժամանակն է մատչելի դառնում. բնական է, որ երեխաներին այդպիսի նիւթերով կերակրելով գուցէ աւելի բացասական հետեանքի հասնէին: Կրօնը խղճի հարց է և այնտեղ ստիպողական տարրը դեր չունի. դեր ունենալու դէպքում հետեանքը առաւելապէս բացասական է եղել: Դպրոցական կեանքն այդ է ցոյց տուել. որքան երեխաներին ստիպողաբար են եկեղեցի տարել, ստիպողաբար են կրօնական գիտելիքներ սովորեցրել, այնքան նրանք այդ ամենը իբրև բեռն են նկատել ու աշխատել են խուսափել:

Աւելի կարևորը թեմական դպրոցների հարցն էր: Թեմական դպրոցից պահանջում էր, որ քահանաներ պատրաստեն, որովհետեւ, ասում էր, պահանջում էք կրթութեամբ հոգևորականներ, իսկ կրթութեամբ հոգևորականներ կարող է, տալ թեմական դպրոցը, հետեալապէս հոգևոր սեմինարեանները պիտի նպաստեն այդ պահանջը լրացնելուն: Անշուշտ է, որ կրթութեամբ, հասարակութեան պիտանի անդամներ ևս պէտք է տային, բայց առաւելութիւնը հոգևոր պաշտօնեաներ պատրաստելու կողմը պիտի լինի: Այս խնդրում Կարապետ վ-ը ուժեղ հակառակութեան էր

հանդիպում և այդ պատճառով նա որոշ չափով յատկապէս քահանայացուներ պատրաստող ընծայարանների կողմնակից էր:

Անշուշտ Կարապետ վ-ը իրաւական և տրամաբանական հիմք ունէր, սակայն մոռացութեան էր տրւում այն հանգամանքը, որ մեր թեմական դպրոցները միակ ազգային դպրոցներն են, որոնց մէջ հայ լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը պէտք է լաւ անցնէին, որ ծխական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստուէին, ուստի և պէտք էր յատկապէս քահանայացուներ պատրաստելու համար ընծայարաններ հիմնէին. այս խնդրում Կարապետ վ-ը իւր նպատակին չհասաւ*): Թիֆլիսում Սևանում բացուեցին ընծայարաններ, բայց անյաջողութեան հանդիպեցին. կարճատե գոյութիւն ունենալուց յետոյ փակուեցին: Գիւղական քահանաներ ունենալու հարցն այժմ էլ աւելի հրամայական պահանջ է դարձել. բայց սրա լրացման համար համապատասխան միջոցներ առայժմ ձեռք չեն առնուած:

Ինչ վերաբերում է ձեմարանում կրօնաւորների պատրաստելու խնդրին, սկզբում նա որոշ յաջողութիւն գտաւ. յայտնի է, որ 90-ական թուականների վերջերում 10—15 ձեմարանական կուսակրօն դարձան, գնացին արտասահման, Ռուսաստան բարձրագոյն ուսում ստացան, բայց դրանցից միայն 5—6 հոգի մնացին, մնացածները այլ այլ պատճառներով ելան: Այդ խումբն էր, որ պէտք է Կարապետ վ-ի աջակցութեամբ եկեղեցու և հոգևորականութեան վերածնութեան խնդրին առաջ տանէր, բայց այս խնդրին ևս մնաց անկատար, ինչ ինչ պատճառներով որոնց մասին խօսելը խնդրից դուրս է: Կարևորն այն է, որ ցոյց տրւի, թէ Կարապետ վ-ը իբրև կրօնաւոր, իբրև կրօնական ոգու նախանձախնդիր միայն խօսել չգիտէր, այլ և իրական միջոցներ էր դիմում իր ծրագիրն առաջ տանելու. նա աշխատում էր հակառակորդ բանակի դէմ

*) «Արարատ» 1899 թ. է.

պատրաստել մի ուժեղ, կրթութեամբ հոգևորականների խումբ. ոյժի դէմ ոյժ հանդէս բերել:

Իբրեւ հայ եկեղեցու հոգևորական Կարապետ վ-ը անշուշտ միայն կրօնա-բարոյական խնդիրներով չէր զբաղւում. նա գիտէր, որ հայ եկեղեցին հայ ժողովրդի յառաջադիմութեան համար մի սրբազան հիմնարկութիւն է և պէտք է հայ մարդու զարգացմանը ծառայէ նաև այլ տեսակէտից: Այս տեսակէտից նրա դաւանանքը աւելի քան պարզ արտայայտուել է այն ճառում, որ նա արտասանել է դեռ սարկաւազ ժամանակ, երբ արտասանմանից նոր եկած ի ներկայութեան Հայրիկի, միաբանութեան և ժողովրդի Գէորգ Գ.-ի գերեզմանի առաջ ասել է: Վանք մտած ճեմարականների ուխտն է. «յարգել անցեալը, ճշմարտութեամբ պահել նուիրական աւանդութիւնները, խոնարհուել այն ամենի առաջ, որ մեր պաշտելի նախնեաց անունն ու դրոշմն է կրում».—«Հայի արեան անցունքը թող լինի մեր ուխտի չորրորդ կնիքը. քո հառաչանքը երբէք դադար չտայ մեզ թմրութեան անկողնի վրայ. ընդոստ վեր ելնենք, Կայենի նման աստանդական շրջենք, եթէ քո ցաւերը տեսնենք ու անտարբեր մնանք»^{*)}: Ահա մի սրտաբուլիս ուխտ, որ Ե. դարու հոգևորականի ոգին է յիշեցնում:

20 տարի առաջ, երբ արիւննուշտ Արդիւլ Համիդը 95—6 թւականների կոտորածն էր կազմակերպել Տաճկահայաստանում և սովալլուկ փախստականները լցուել էին էջմիածին. հայ ժողովրդի անօրինակ տառապանքը տեսնող Կարապետ վ-ը «Արարատ»-ի էջերում սրտաբուլիս յօդուածներ էր գրում, որոնց մէջ նրա անկեղծ, զգայուն ոգին է նկատուում, որոնցից պարզ երևում է, որքան սրտացաւ էր դէպի ժողովուրդը, որին ծառայելու երզումն էր տուել վանք մտնելով:—Ո՛ր է հայի Աստուածը, բողոքում է նա, ո՛ր է նրա արդարութիւնը, երբ ամբողջ մի ազգ վիրաւոր ընկած է տեսնում. փոխանակ

սփոփանքի, ծաղր ու անարգանք է լսում, մեր արիւնը բողոքում է, մեր ողջ ներքինը զայրանում. առաջին անգամ չէ անմեղ արիւն թափւում^{*)}: Եւ նա իբրեւ հաւատացեալ քրիստոնեայ դիմում է Տիրոջ օգնութեանը. նա վստահ է, որ Լուսաւորչի Աստուածը կօգնի. սակայն նա այն կրօնաւորներից չէ, որոնք առաջարկել են հային ամեն անարդարութեան առաջ միայն վիզ ծռել, տաճկի բարբարոսութեան առաջ սողալով գոյութիւնը բարշ տալ: Նա լաիրշ չարութեան, աղաղակող անարդարութեան դէմ դնելու, պատասխանելու կողմնակից է և ահա կանգ է առնում Սասունի կոտորածի առթիւ.—Սասունը, Հայոց աշխարհի ոյժ և պարծանք մի սերունդ թաւալցող էր ընկել. բայց ընկել էր պանծալի մահով, իր տունն ու տեղը պաշտպանել էր. իսկ այժմ հայ ժողովուրդն ընկաւ անփառունակ, առանց ընդդիմութեան, առանց բողոքման^{**)} բողոքելու, պանծալի մահով ընկնելու, ընդդիմանալու և պաշտպանելու տունն ու տեղը, պատիւը հայ մարդու համար սրբազան պարտականութիւն է համարում, մի գաղափար որը իւր ժամանակի կաթողիկոսի³ Հայրիկի գաղափարն էր, որին և նա իւր ուխտի խօսքում ասել էր «Ձեզ ենք ուզում հետևել»^{***)}: Հայ ժողովրդի նկատմամբ նրա ունեցած սէրը խորն ու անկեղծ էր. Ս. Վարդանանց յիշատակին գրած իւր յօդուածում ասում է, «... սովորենք մեր հարազատ մօր խանդակաթ աչքերից կաթած մի շիթ արցունքը աւելի գնահատել, քան աշխարհիս բոլոր մարգարիտներն ու գանձերը»^{†)}:

Հայ ժողովրդի կոտորածի առաջն առնելու համար նա կարևոր է համարում նաև քրիստոնեայ աշխարհի միջամտութիւնը. յատկապէս Ռուսաստանը, որը սլաւօն փոքր ազգերին պաշտպանել է, այժմ էլ պէտք է պաշտ-

^{*)} «Արարատ» 1895 թ. Թ.

^{**)} » 1895 թ. ԺԲ.

^{***)} » 1894 թ. Թ.

^{†)} » 1896 թ. Բ.

^{*)} «Արարատ» 1894 թ. Թ.

պանէ հայերին, ինչպէս առաջներում միշտ էլ արել է. քրիստոնեայ ժողովրդին պիտի պաշտպանի քրիստոնեայ պետութիւնը: Նա հաւատացած է, որ մեզ համար փրկութիւն պէտք է լինի և Լուսաւորչի Աստուածը մեզ չի թողնի: Քաղաքակիրթ աշխարհի քրիստոնէական ոգուց բրդխած աջակցութեան վրայ նա այնքան էլ մեծ յոյս չունի. Փրկիչն է մնում միայն միայն նրա անդրդուելի հաւատի հիմքը*): Հայ ժողովրդի փրկութեան գաղափարը նրա անդրդուելի համոզմունքն է կազմում և ոչ մի հալածանք, կոտորած նրան չի վհատեցնում նրա հաւատը, նրա համոզումը հայ ժողովրդի տոկունութեան, եռանդի նկատմամբ շատ է խորը և այդ հաւատով էլ նա աշխատել է: Յիշենք նրա օրինակելի գործը կալուածների գրաւման ժամանակ, հայ թուրքական կոտորածի ահաւոր օրերին, Ատրպատականում առաջնորդ եղած ժամանակ ցոյց տուած սիրուն աշխատանքը: Կարապետ վ-ն էր, որ ճեմարանում եղած ժամանակ թէ զրդում էր աշակերտներին զնալ պտտել հայրենի երկիրը, սրբութիւնները, թէ ինքն էր կազմակերպում խմբեր ու շրջում հայրենի աւերակները, ծանօթանում բուն ժողովրդին, նրա հայեացքներին, նիստ ու կացին: Թեմակալ եղած ժամանակները միշտ էլ շրջում էր գիւղերը առ տեղեւան ծանօթանալու ժողովրդի դրութեան հետ, աչքով տեսնելու, ականջով լսելու նրա ցաւը, նրա ուրախութիւնը:

Վերջապէս Կարապետ վ-ը իբրեւ գիտնական զբաղուել է հայ եկեղեցու ու նրա նշանաւոր հոգևորական գրողների աշխատանքների քննութեամբ և հրատարակել է թէ առանձին գրքերով, թէ «Արարատ»-ում մի շարք աշխատութիւններ, որոնք գնահատուել են եւրոպական գիտնականներից: Այդ գրուածքներում էլ երևում է նրա սրտացաւ հայ մարդու, հայ հոգևորականի ոյժը, որով նա միշտ գործել է թէ իբր ուսուցիչ և տեսուչ ճեմարանի, թէ իբրեւ խմբագիր «Արարատ»-ի, թէ իբրեւ թե-

մակալ երևանի, Ատրպատականի, Շամախու, թէ իբրեւ գրական-գիտական գործիչ: Նա ամենուրեք եղել է միշտ էլ մի որոշ աշխարհայեացքի տէր, հաւատարիմ հոգևորականի կոչմանը, Փրկչի վարդապետութիւնը: Նա մի կազմակերպուած աշխարհայեացքի տէր էր, ձգտում էր իւր սկզբունքներին հաւատարիմ մնալով գործել. նա ոյժ էր. այդ տեսնում, ըմբռնում էին հակառակորդները և հաշի էին առնում:

Համեմատենք 60-ական թուականների պահպանողական ուղղութեան ներկայացուցիչների ասածները Կարապետ վ-ի սկզբունքների հետ և կանսները, որ տարբերութիւնը շատ է մեծ, մինչև անճանաչելիութիւն:

Մինչ առաջինները եկեղեցու ամեն մի աւանդ, Ս. Գրքի ամեն մի տող ճշմարտութիւն էին համարում և որևէ փոփոխութեան հակառակ էին, Կարապետ վ-ը ինքը ազատ քննութեան կողմակից էր և եկեղեցու վերանորոգութեան, վերակազմութեան ջերմ պաշտպան, աշխատաւոր: Մինչ 60-ական թուականներում հայ հոգևորականութիւնը պաշտպանութեան կարօտ էր և զրաից էր սպասում օգնութիւնը, Կարապետ վ-ի ժամանակ հայ հոգևորականների շարքում կային կրթուածներ, որոնք իրենք իրենց դատը պաշտպանել կարողանում էին:

Իբրեւ խորը գիտնական նա լաւ էր տեսնում, որ հայ կեանքը վերջին տարիներում տարօրինակ փոփոխութիւնների է ենթարկւել, շնորհիւ թերուս գրողների, խօսողների. նրա ձգտումն էր այդ վտանգաւոր երևոյթի առաջն առնել գիտական լուրջ պատրաստութիւն ունեցող հոգևորականներով: Նա լաւ գիտէր, որ կեանքը շատ է բարդ ու բազմակողմանի և միայն կրօնական հարցով չէ կարող սպառել այդ կեանքի վերածնութիւնը, բայց նա տեսնում էր, որ հայ ժողովրդի կեանքում իւրայատուկ արժէք ունեցող հայ եկեղեցու դերը յանգէտս կամ յանիրաւի աշխատում են նսեմացնել հակառակորդները. ահա զրա դէմ էր պայքարում միշտ իբր հաւատացեալ քրիստոնեայ, իբր հայ եկեղեցու հաւատարիմ պաշտօնեայ:

*) «Արարատ» 1896 թ. ԺԲ.

Գնաց Կարապետ եպիսկոպոսը, որոշ հոսանքի, ուղղութեան մեծ ներկայացուցիչը և թողեց կիսատ իւր սիրած աշխատանքը. գնաց եկեղեցու հաւատարիմ զաւակը, Փրկչի բարոյական վարդապետութեան անկեղծ հետևողը:

Այժմ հանուր կեանքի վերաշինութեան ծանր ժամին հայ եկեղեցու վերանորոգութեան, հայ հոգևորականութեան օրուայ պահանջ դարձած ծանրակշիռ խնդիրներն ինքնին են հրապարակ իջնում ու պատասխանի սպասում: Կարող, ձեռնհաս ոյժերի կարիքն զգացւում է. սրտացաւ աշխատաւորների պահանջը մեծ է: Այս խնդրում Կարապետ եպիսկոպոսի կեանքն ու գործունէութիւնը ուսանելի շատ կողմեր ունի. նրա գրաւոր վաստակները, հոգեշունչ առաջնորդողները, նրա մտածուած յօդուածները մեր եկեղեցու պայծառութեան նախնախնդիրների համար շատ նիւթ կարող են մատակարարել, ուստի և ստորև դնում ենք «Արարատ»-ում գետեզած յօդուածների ցուցակը:



ՅՈՒՑԱԿ ԿԱՐԱՊԵՏ Վ.Ի ԾՅԴՈՒԱՇՆԵՐԻ

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

1894 թ.

- № IX.—1) Կարապետ սարկի ճառը. 291—2. (Գէորգ Կաթողիկոսի շիրմի առաջ ուխտ-երդում).
 № XII.—2) Յանուն Քրիստոսի ամենայն ծունր կրկեսցի. 357—9.

1895 թ.

- № I.—1) Առաջնորդող. 1—3 Կ. ա.
 » —2) Մծղնէից աղանդը. 3—8 Կ. ա.
 № II.—3) Ս. Ղևոնդեանց յիշատակին. 41—3 Կ. ա.
 » —4) Քարողի նշանակութիւնը և գործադրութեան եղանակը. Կ. ա.
 № III.—5) Հոգևորական ասպարէզը. 77—8 Կ. վ.
 » —6) Երեմիա մարգարէ. 79—81 Կ. վ.
 » —7) Յաւելուած «Արարատ»-ի. 81—2 Կ. վ.
 № IV.—8) Քր. յարեաւ ի մեռելոց. 109—111 Կ. վ.
 » —9) Գրիգոր Սքանչեղագործի անուամբ ֆալցադ հատուածներ. (յաւելուած Ար-իԱ.). 111—113 Կ. վ.
 » —10) Զաղագովութիւն և վկայաբանութիւն Ապողոնիոսի և այլ յիշատակարանք նորին Քրիստոնէութեան. մատենախօսութիւն Փ. Կոնիքէր. 113—115 Կ. վ.
 » —11) Վրաց դարձի պատմութիւնը ըստ Մ. Խորենացւոյ (յաւելուած «Ար-ի» Գ.). 121—3 Կ. վ.
 № V.—12) Կատարեալ ազատութիւն. 143—5 Կ. վ.
 » —13) Մի հատուած Որոգէնեսի գրուածներից և Պատճառ լայն և նուրբ գրոց ձեռագիրը. 146—150 Կ. վ.
 » —14) Բողոքական քարոզիչները մահմեդականների մէջ. 151—2 Կ. վ.
 № VI.—15) Առաջնորդող. 175—7 Կ. վ.
 » —16) Բեթէլ անկեղանոցը Բիլէֆելդի մօտ. 182—8 Կ. վ.
 » —17) Փրկութեան բանակը և զենեւալ Բութ. 191—4 Կ. վ.
 » —18) Մի բացատրութիւն. (բանակիւ Մեսրոպ վ. Տէր Մովսիսեանի պէս). 221—2 Կ. վ.

- № VII.—19) Խօսքի համաձայն գործ. 223—6 Կ. վ.
 » —20) Մի յիշողութիւն անցեալից. 229—30 Կ. վ.
 » —21) Հայ հոգեւորականութեան մէջ կղերական ոգի որո-
 նողները 250—4. Կ. վ.
 » —22) Անվերնագիր. (բացատրութիւն, որ մեր և յունաց
 եկեղեցու մէջ տարբերութիւն կայ). 258—9 Կ. վ.
 № VIII.—23) Առաջնորդողը. 270—2 Կ. վ.
 » —24) Ծոյլի կիրճը թրգմ. 273—282 Կ. վ.
 » —25) Կիրակնօրեայ դպրոցները կամ մանկանց ժա-
 մապաշտութիւնը Գերմանիայում. 297—301 Կ. վ.
 » —26) Արմաշու դպրեմանքը. 310—11 Կ. վ.
 № IX.—27) Առաջնորդողը. 319—321 Կ. վ.
 » —28) Աւետարանական համայնական ժողովը Էրֆուրտ.
 (1895 յունիսի 4—6-ին) 324—6 Կ. վ.
 № X.—29) Առաջնորդողը 369—370 Կ. վ.
 » —30) Անվերնագիր. (Ենսէնի, Կոնիքէրի աշխատութիւն-
 ների մասին տեղեկութիւններ) 391—2. Կ. վ.
 » —31) Պրօֆ. Ֆետտէրի հրատարակութիւնները. առ Կո-
 ընթացից երրորդ տարեկանին թղթի մասին. 392—4 Կ. վ.
 № XI.—32) Մեր մխիթարութիւնը նեղութեան օրերում.
 409—10 Կ. վ.
 № XII.—33) Տարուայ վերջին. 454—6 Կ. վ.

1896 թ.

- № I.—1) Նոր տարի. 1—2 Կ. վ.
 » —2) Ռուսաց եկեղեցական ցանկութիւնները մեր եկե-
 ղեցու նկատմամբ. 4—9 Կ. վ.
 № II.—3) Ս. Վարդանանց յիշատակին. 53—4 Կ. վ.
 » —4) Նշխարներ ամենահին եկեղեցական հայրերի գրը-
 ւածներին. 58—61 Կ. վ.
 » —5) Գործք առաքելոց Սահակ քհ. Սահակեանի. մատե-
 նախօք. 79—80 Կ. վ.
 № III.—6) Անմահ խաչեցեալը. 105—7 Կ. վ.
 » —7) Հաւատոյ զօրութիւնը ու արդիւնքը. 107—110 Կ. վ.
 № IV.—8) Աններկի մեղքը. 153—5 Կ. վ.
 » —9) Բնութեան խնդրի նկատմամբ մեր և Մխիթարեան
 հայրերի ունեցած հայեացքը. 155—164 Կ. վ.
 № V.—10) Ի յիշատակ սրբազան թագադրութեան Նորին
 կայս. Մեծ. Նիկ. Բ-ի և Աղէքսանդրա. Ֆէօդորովնայի
 210—14 Կ. վ.
 » —11) Երբ Յովհ. եպ-ի թուղթը. 214—5 Կ. վ.

- № VI.—12) Վարդապետ. 257—9 Կ. վ.
 № VII.—13) Վհատելի բողոքն ու հաւատը. 297—8 Կ. վ.
 № VIII.—14) Մեղքի բռնութիւնը. 345—6 Կ. վ.
 » —15) Կրկին բնութեան խնդիրը և Մխիթարեան հայ-
 րերը. 353—364 Կ. վ.
 » —16) Գաղուածք Christ. Welt. թերթից հայերի մասին.
 366—9 Կ. վ.
 № IX.—17) Անմեղ մահապարտը 393—5 Կ. վ.
 № X.—18) Փրկարար լուսաւորութիւնը. 441—3 Կ. վ.
 » —19) Հայոց եկեղեցու յարաբերութիւնը աղուանից
 հետ. ըստ Վրթանէս Գեղթողի. 443—7 Կ. վ.
 » —20) Մի նկատողութիւն (Մնացորդաց գրքի մասին).
 459—460 Կ. վ.
 № XI.—21) Սրբազան պարտաճանաչութիւնը. 489—491 Կ. վ.
 » —22) Աստուծոյ կամ երկնքի արքայութեան զաղա-
 փարը. 491—4 Կ. վ.
 » —23) Թուղթ Կոմիտասայ հայոց կաթ. ի պարսս.
 494—5 Կ. վ.
 № XII.—24) Անփառունակ տարեվերջը. 537—9 Կ. վ.
 » —25) Աստուծոյ արքայութիւն տանող արդարութեան
 ճանապարհը 539—544 Կ. վ.

1897 թ.

- № I.—1) Ժամանակի և կեանքի վերապաշտողը. 3—4 Կ. վ.
 » —2) Սէր առ Աստուած. 5—6 Կ. վ.
 № II.—3) Ճշմարիտ հերոսը. 49—51 Կ. վ.
 » —4) Ագինայի նամակները թրգմ. Յովհ. քհ. Տէր Պետ-
 րոսեան մատենախօսութիւն 70—2 Կ. վ.
 № IV.—5) Յարուցեալ ուսուցիչը. 145—7 Կ. վ.
 » —6) Քրիստոնէական տօների սկիզբը և պատէքի վէճը.
 147—150 Կ. վ.
 № V.—7) Իրենէոս և նշխարներ նորա գրուածներէց. 199—
 201 Կ. վ.
 № VI.—8) Տիմոթէոս Էլուրոսի նորագիւտ երկը և նրա մի
 քանի հատուածները նախնի հայրերից ասած. 251—5 Կ. վ.
 № IX X.—րդ 9) —Սրբալոյս միւռոնի օրհնութիւնը. 387—9 Կ. վ.

1898 թ.

- № I.—1—4) Յովհաննէս Մկրտիչ. 4—7 Կ. վ.
 » —2) Քննական կրօնագիտութիւն. Սահակ քհ. Տէր Սար-
 գսեանի. 11—4 Կ. վ.

- » —3) Die Entstehungsgeschichte, des Monotheismus G. Owsepianz. 15 Կ. վ.
- № III—IV.—4) Քարոզը մեր մէջ. Կ. վ.
- № V.—5) Աստուածարաններ պէտք են. 199—204 Կ. վ.
- № VI.—6) Կրօնաւորներ պէտք են. 254—8 Կ. վ.
- » —7) Ուսուցումն քր. կրօնի. Սահակ քհ. Սահակեանի. 269—274 Կ. վ.
- № VIII.—8) Կրկին քահանայական հարցը և աստուածարանութիւնը. 354—9 Կ. վ.
- № X.—9) Հայոց եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը դաւանական վէճերի մէջ և Բաբելոն կաթ. 431—6 Կ. վ.
- » —10) Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը և վարդապետութիւնը. Տաճատ քհ. Մարադեան. 469—470 Կ. վ.
- № XI և XII.—11) Մի անուշադիր փնտցած հայրապետ Ս. Գրիգոր Լուսաւորչի տնից. 482—5 Կ. վ.
- » —12) Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներս. Հ. Հ. դպրոցի. I հ. Ա. Երեցեանի. 543—4 Կ. վ.

1898 Բ.

- № II. 1) Կրթութեան քահանաները և ժողովուրդը. 64—7 ?
- » —2) Հարկանցի դիտողութիւններ. 67—8 Կ. վ.
- № V.—3) Հակակրօնական և դաւանափոխական շարժումը մեր մէջ. 186—190 ?
- № VII.—4) Ինչպէս պէտք է վերակենդանացնել հաւատը մեր ժողովրդի մէջ. 284—7 ?
- № VIII.—5) Մեր ժողովրդի բարոյական վիճակը. 338—9 ?
- № IX.—6) Լեզուի և գրչի սանձարձակութիւնը մեր մէջ. 381—3 ?
- № X և IX.—7) Մի նշանաւոր աստուածաբանի ուսուցչական գործունէութեան 25 ամեակը 426—430 ?
- № X.—8) Աղաւաղումներ և օտարամոլութիւններ մեր եկեղեցւոյ մէջ. 503—5 ? *)

1900 Բ.

(Այս թւից խմբագիր է Գ. Վ. Կ. Վ. հրատարակում է):

- № I.—1) Ս. յայտնութիւն. 5—9 Կ. վ.
- » —2) Նազաի երկու կիսատ տողեր. 45—47 Կ. վ.
- № IV.—3) Փրկիչը գերեզմանի առաջ. 147—9 Կ. վ.
- » —4) Վեհափառ Հայրապետի ծննդեան 80-րդ տարեդարձը ութսունամեայ քարոզիչն ու ուսուցիչը. 163—5 Կ. վ.

*) Հարցական նշաններ ունեցող յօդուածները ստորագրութիւն չունին. բայց ոճից, նիւթից երեւում են, որ Կ. Վ. Վ. գրչից են ելած:

- № V.—5) Ժմարտութեան հոգին. 223—230 Կ. վ.
- » —6) Կոչման կարեւորութիւնը քրիստոնէական տեսակէտից. 230—3 Կ. վ.
- № VII.—7) Լուսոյ որդիք. 324—6 Կ. վ.
- » —8) Հին ցաւ. 338—343 Կ. վ.

1901 Բ.

- № V և VI.—1) Քրիստոնէութեան իսկութիւնը. 267—270 Կ. վ.
- » —2) Թիւրիմացութիւններ. 291—4 ?
- № VII և VIII.—3) Հակասութիւններ. 349—352 Կ. վ.
- № IX և X.—4) Լուրջ դիտողութիւններ. 442—4 Կ. վ.
- № XI և XII.—5) Մի հարկանցի նկատողութիւն 513—5 Կ. վ.

1902 Բ.

- № II.—2) Քարոզեաց «յառաքեալն» և «յոյս յաբութեան» 113—120 Կարապ. վ.
- № VII—VII.—7—8) Լաւազոյն արդարութիւնը. 599—603 Կ. վ.
- » —Հայ եկեղեցին. 628—9 Կ. վ.
- № IX—X.—9—10) Աւետարանն ու աշխարհը. 757—771 Կ. վ.
- » —Թիւրիմացութիւններ հայոց եկեղեցւոյ պատմական անցեալի նկատմամբ. 807—835 Կ. վ.
- № XI—XII.—11—12) Աւետարանն ու աղքատութիւնը. 999—106 Կարապ. վ.
- » —Աստուածաշունչի նոր հրատարակութիւնը. 1069—1088 Կ. վ.
- » —«Արարատ»-ի ընթացողներին. 1013—1015 Կ. վ.

1903 Բ.

- № I.—1) Առաջիկայ տարին. 6—10 Կ. վ.
- » —2) Դարձեալ Զուարթնոց եկեղեցին. 38—57 Կ. վ.
- » —3) Երևոյթներ հասարակական կեանքից մեր մամուլի մէջ. 80—91 Կ. վ.
- № II—III.—4) Աւետարանն ու իշխանութիւնը. 118—124 Կ. վ.
- » —5) Դարձեալ Զուարթնոց եկեղեցին. 140—150 Կ. վ.
- » —6) Մեր մամուլը. 258—268 Կ. վ.
- № IV.—7) Քրիստոսի ս. Յարութիւնը. 301—309 Կ. վ.
- № V.—8) Աւետարանն ու աշխարհը կամ քաղաքակրթութիւնը 396—401 Կ. վ.
- » —9) Մեր մամուլը. 448—463 Կ. վ.
- № VII.—10) Հարստութեան ցաւը. 589—595 Կ. վ.

1912 Բ.

- № IX.—9) Ս. Միւռնի օրհնութիւնը. 780—795 Կարապետ եպիսկոպոս.

1913 թ.

- № I.—1) Անյայտ մնացած մի հայ մատենագիր ժԲ. դարու.
43—52 կար. եպ.
№ II—III.—2—3) Ս. Իրէնէոսի «Յոյցքը» երկրորդ գերմ. թրգմ.
180—198 կար. եպ.
№ VI—VII.—6—7) Մահմեդական լուծը և նրա բռնութեան ներ-
քոյ ծաղկող հայ վարդապետարանները. 586 605
կարապետ եպ.

1898—1899 տարիներում առաջնորդողները անստորագիր
են. ենթադրելի են, որ Կ. վ-ի գրչի գործ են:

1998 թ.

- № 1.—Քրիստոսի յայտնութիւնը. 1—4.
№ 3—4.—Քրիստոս յարեալ ի մեռելոց. 99—100.
№ 5.—Մի կալ հակառակ չարին. 180—5.
№ 6.—Քրիստոսի եկեղեցին. 236—9.
№ 7.—Եօթերորդ պատուիրանը. 285—8.
№ 8.—Անապական և անկողողտելի գանձը. 331—4.
№ 9.—Հաւատը և հրաշքը. 380—3.
№ 10.—Աստուծոյ երկայնամտութիւնը և դատաստանը.
429—431.

1899 թ.

- № 1.—Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ. 4—5.
№ 2.—Հաւատոյ մարտը. 53—5.
№ 3—4.—Սրբութեան պահանջը. 99—102.
№ 5.—Տէր իմ և Աստուած իմ.
№ 6.—Կեանքը. 221—3.
№ 7.—Բացատրութեան կարօտ կէտեր Ս. Գրքի մէջ.
269—271. և № 8. 327—9. № 9. 373—6. № 10—11.
424 6.
№ 8.—Կրկնուած մեղքը. 324—7.
№ 9.—Վաստակելու շնորհը. 372—3.
№ 10—11 —Աստուածային հոգւոյ գործունէութեան նշան-
ները. 421—4.
№ 12. Մշակների պէտքը հոգևոր ասպարիզում. 485 - 8.



4084



ՀՀ Ազգային գրադարան



NL0160853



9122 է 25 ԿՈՊ.